ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650060
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N _____

__ _____ 2023 թ.

ԱՆԿԱԽ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՝ՎԱՀԵ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ԹԵՀՄԻՆԵ ԵՆՈՔՅԱՆԻՆ

vaheohanyan@gmail.com,

yenoqyantehmine@gmail.com,

Հեռ. 099858981, 093848476

Հարգելի՛ պարոն/տիկին

Ձեզ եմ տրամադրում ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքներում սուբվենցիոն ծրագրերով խմելու և ոռոգման ջրի համակարգի արդիականացման, նոր կառուցվող ջրամբարների և Սևանա լճի ավազանի ջրային ռեսուրսների մաքրությանը, լճի էկոհամակարգի վերականգնմանն ու պահպանմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր՝ էլ. նյութ:

Հարգանքներով՝

X

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀԱՆ ՋԱՐՈՅԱՆ

Գյուղ. և շրջ . միջ. վարչություն
Կատ. Ռ.Բաղեյան
Հեռ. 060 650620

1. 2020 թվականի պատերազմից հետո Գեղարքունիքի մարզի սահմանամերձ դարձած համայնքներում որքա՞ն գումար է ծախսվել սուբվենցիոն ծրագրերով խմելու և ոռոգման ջրի համակարգի արդիականացման համար:

2021 թվականին Վարդենիս համայնքում սուբվենցիոն ծրագրերով խմելու ջրի արդիականացման համար ծախսվել է 198.6 մլն. դրամ
, Ճամբարակ համայնքում՝ 64.1 մլն. ՀՀ դրամ:
2021թ. Վարդենիս համայնքում սուբվենցիոն ծրագրերով ոռոգման ջրի արդիականացման համար ծախսվել է 44.4 մլն. ՀՀ դրամ,
2022 թվականին ճամբարակ համայնքում սուբվենցիոն ծրագրերով խմելու ջրի արդիականացման համար ծախսվել է 63.4 մլն. ՀՀ դրամ,

5. Արյո՞ք ներկայումս եվ առաջիկա 5 տարիներին կառուցվող ջրամբարները կլուծեն ջրային ոլորտի խնդիրները, ջրային կառավարման եվ ջրային կորոստների խնդիրները:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն իրականացնում է Ծրագրով ամրագրված 15 ջրամբարների կառուցման և նախագծման աշխատանքները:
Տեղեկացնում ենք, որ ջրամբարներից 2-ը՝ Արգիճիի և Աստղաձորի, կառուցվելու են ՀՀ Գեղարքունիքի մարզում, որոնց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանված մրցութային ընթացակարգերով արդեն իսկ կնքվել են համապատասխան պայմանագրեր և իրականացվում են նախագծման նախապատրաստական աշխատանքներ:
Ջրամբարների կառուցման արդյունքում մարզի համայնքներում ջրովի վարելահողերը կավելանան շուրջ 3500 հեկտարով կամ 32 տոկոսով:

6. Կա՞ն արդյոք Ձեր կողմից կամ այլ ընկերությունների կողմից ներկայացված՝ Սևանա լճի ավազանի ջրային ռեսուրսների մաքրությանն ու լճի էկոհամակարգի վերականգնմանն ու պահպանմանն ուղղված ծրագրեր, և ի՞նչ վիճակում է դրանց իրականացումը

EU4Sevan ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (ԳԴՀ ՏՀԶՆ) կողմից: Այն «ԵՄ-ը հանուն էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի» ԵՄ գործողության և ԳԴՀ ՏՀԶՆ-ի կողմից ֆինանսավորվող «ECOServe» ծրագրիմաս է կազմում: Ծրագիրն իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ)-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀայաստանիՀանրապետությանշրջակամիջավայրինախարարությանհետհամատեղ:

EU4Sevan-ը նաև համագործակցում է ակադեմիական գործընկերների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ հետևյալ հատուկ նպատակներն իրագործելու համար.

1. բարելավել Սևանա լճի ջրբաժանի ջրի մոնիտորինգի և կառավարման կարողությունները,

2. բարելավել էկոհամակարգին բարենպաստ և ջրապաշտպան հողօգտագործման և մշակման պրակտիկաների ներդրման կարողությունները,

3. բարելավել կեղտաջրերի մաքրման աշխատանքների իրականացման հնարավորությունները,

4. բարձրացնել Սևանա լճի պահպանության վերաբերյալ իրազեկվածության ու տեղեկատվության հասանելիության աստիճանը ավազանային համայնքների, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի շրջանում,

5. բարելավել Սևանա լճի էկոհամակարգի կառավարումը:

Ձեր հարցման 2, 3. և 4 կետերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե: